

ՇՈՅԱՔԱՂԱՔԱՑ

ՀԱՅ

ՅԱՊԱԶԴԻՄԱԿԱՆ ՄԻՋԻԹԻՒՆ

Հիմնուած

25 Օգոստոս 1922-ին

ԵՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

1925

Սահ Ֆրանսիսկոյ, Քալիֆորնիա

35517

~~2850~~ K<sub>9</sub>

ARMENIAN  
PROGRESSIVE SOCIETY  
OF  
BAY CITIES

ORGANIZED  
ON  
AUGUST 25th, 1922

1925

SAN FRANCISCO, CALIFORNIA

35577 10272

Ծոցաբաղաբաց

ՀԱՅ

ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

I ԾՐԱԳԻՐ

Ա. ԱՆՈՒՆ

Յօդուած 1 — Միութեանս անունն է՝  
ԾՈՑԱՋԴԱԲԱՅ ՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱ-  
ԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ARMENIAN PRO-  
GRESSIVE SOCIETY OF BAY  
CITIES.)

Բ. ՆՊԱՏԱԿ

2 — Միութեանս նպատակն է՝

ա. — Գաղութիս երիտասարդ սերուն-

դին մէջ մշակել գրական, գիտական և  
գեղարուեստական ճաշակը.

թ.— Հայութեան և Հայրենիքին սէ-  
րը վառ պահէլ գաղութիս Հայ հասա-  
րակութեան մէջ.

գ.— Հայութիւնը ծանօթացնել Ա-  
մերիկան ժողովուրդին:

### **Գ. ՄԻԶՈՑՆԵՐ**

3.— Միութիւնս իր նպատակներուն  
իրականացման կը ձգտի հետեւալ մի-  
ջոցներով.—

ա.— Միութեան կապ հաստատելով  
գաղութիս երիտասարդութեան մէջ.

թ.— Ունենալով սեփական ակումբը  
(գրադարան, ընթերցանուածան) .

գ.— Դասախոսական, վիճաբանա-  
կան ժողովներ, բերկերներ (picnic),  
հանդէսներ, երեկոյթներ սարգելով և  
երաժշտական ու թատերական ներկա-  
յացումներ տալով.

դ.— Նմանօրինակ միութեանց հետ  
յարաբերութիւն հաստատելով :

### **Դ. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

4.— Միութեանս կրնայ անդամակցի  
ամէն Հայ անհատ՝ առանց սեռի, գա-  
ւանական և կուսակցական խտրու-  
թեան:

5.— Միութեան անդամները կը բաժ-  
նըւին երկու դասի.

ա.— Գործօն անդամներ.

թ.— Պատուոյ անդամներ:

### **Ե. ՀԱՍՈՑԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ**

6.— Միութեանս հասոյթը կը գոյա-  
նայ հետեւալ աղբիւրներէ.

ա.— Ամսավճարներէ, որ է նուա-  
զագոյն յիսուն սենթ (50c):

ՆԱԽՕԹ.— Ուսանող անդամները զերծ են  
այս ամսավճարներէն:

թ. — Ներկայացումներէ և հանդէս-  
ներէ.

գ. — Մուտքի կամաւոր նուէրներէ.

դ. — Ոչանդամներու տրուած գրքե-  
րու փոխարէն շաբաթական տասը սենթ  
(10c) գանձումներէ.

ե. — Նուիրատուութիւններէ :

## Զ. ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

7.— Միութեանս լուծման պարագա-  
յին, իր ունեցած դրամը և գոյքերու  
փոխարժէքը յատկացնել գրքերու, եւ  
Միութեանս ունեցած գրքերու հետ մի-  
ասին զրկել Հայաստանի Կրթական Խա-  
լսարարութեան :



## II ԿԱՆՈՆԱԳԻՐ

### Ա. ՀՆՏՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդուած 1.— Միութեանս Գործօն  
անդամները միայն ընտրող և ընտրելի  
են :

2.— Պատուոյ անդամ են անոնք՝ որ  
նիւթական կամ քարոյական գնահա-  
տելի ծառայութիւն մը կը մատուցա-  
նեն Միութեանս :

3.— Պատուոյ անդամը կ'ընտրուի  
անդամական ընդհանուր ժողովի մեծա-  
մասնութեան քուէով :

4.— Վարչական ժողովի իւրաքան-  
չիւր անդամը կ'ընտրուի 'ի ներկայու-  
թեան Միութեանս անդամներու, ու-

րոնց թիւը առնուազն պէտք է Վարչու-  
թեան անդամներու թիւին կրկնապա-  
տիկն ըլլայ :

5. — Բնտրութիւնները կ'ըլլան գաղ-  
տնի կամ ձեռամբարձ և մեծամասնու-  
թեան քուէով :

### Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

6. — Վարչութիւնը կը բաղկանայ ա-  
տենապետէ, ատենադպիրէ, գանձապա-  
հէ և երկու խորհրդականներէ :

7. — Վարչութեան պաշտօնավարու-  
թեան շրջանը մէկ տարի է :

8. — Վարչութեան անդամները վեր-  
ընտրելի են :

9. — Վարչական ժողովի պաշտօնն է՝

ա. — Վարել Միութեանս գործերը՝  
հետեւելով սոյն Ծրագիր-կանոնագրի  
սրամագրութեանց .

բ. — Անդամները ընդհանուր ժողո-

վի եւ ընկերական հաւաքոյթներու  
հրաւիրել.

գ. — Ընդհանուր ժողովի օրակարգը  
և ընկերական հաւաքոյթներու յայտա-  
գիրը պատրաստել.

դ. — Դրամական գործառնութեանց  
հսկել.

ե. — Շաբաթը անդամ մը ժողով գու-  
մարել.

զ. — Ընկերական հաւաքոյթներու  
համար իր յարմար նկատած անդամը  
որոշել իր ատենապետ նոյն հաւաքոյ-  
թին.

է. — Առժամեայ կարգադիր յան-  
ձնախմբեր կարգել:

### Գ. ՊԱՇՏՕՆՆԵՐ

10. — Վարչութեան Ատենապետի  
պաշտօնն է՝

ա. — Վարչական ժողովի օրակարգը  
պատրաստել.

թ .— Անհրաժեշտ պարագային վարչական ժողով դումարել, կամ բացառիկ ընդհանուր ժողովներու հրամիրել անդամները :

11.— Վարչութեան Ատենադպիրի պաշտօնն է՝

ա .— Վարչական ժողովի ատենագրութիւնները վարել .

թ .— Թղթակցութիւններ կատարել .

գ .— Բնդհանուր համարատուական ժողովներէ զատ՝ ընկերական միւս ժողովներու ատենագրութիւնները վարել :

12.— Վարչութեան Գանձապահի պաշտօնն է՝

ա .— Անդամավճարները գանձել փոխան ընկալագրի .

թ .— Միութեանս գրամական հաշիւները կանոնաւոր կերպով պահել .

գ .— Դրամատունէ գանձուելիք ուեւ գումար գանձել իր և վարչութեան Ատենապետի ստորագրութեամբ :

Դ . ՀՐԱԺԱՐՈՒԻՄ

13.— Հրաժարող անդամը պարտի իր հրաժարականը գրաւոր կերպով ներկայացնել Վարչութեան :

14.— Վարչութեան պակսած կամ հրաժարած անդամին փոխարէն Ընդհ. ժողովը կրնայ նոր մ'ընտրել :

15.— Ուեւէ անդամ երբ մինչև վեց ամիս չէ՛ վճարած իր ամսականը, հրաժարեալ կը նկատուի :

Ե . ԲՆԴՀ . ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

16.— Անդամական հաւաքոյթները (դասախոսական, վիճաբանական, ևն.) ամիսը անդամ մը տեղի կ'ունենան, եւ այդ ժողովներու յայուագրին առաջին մասը կը կազմէ խորհրդակցութիւն Միութեանս ընթացիկ գործերու մասին :

17.— Անդամներու թիւին մեծամասնութեան ստորագրութեամբ կարելի է Վարչութեան Ատենապետէն պա-

հանջել բացառիկ ընդհանուր մը  
դուժարումը :

18.— Միութիւնս իբր անկախ կազ-  
մակերպութիւն, պէտք չէ՝ միջամուխ  
ըլլայ դաւանական, հասուածական և  
կուսակցական բնոյթ կրող խնդիրնե-  
րու :

Զ. ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

19.— Սոյն Ծրագիր-Կանոնագրի Ա-  
ռաջին և Երկրորդ յօդուածներէն դատ՝  
կարելի է բարեփոխութիւններ ընել առ  
նուազն Միութեանս անդամներու թի-  
ւին երկու երրորդի ( $\frac{2}{3}$ ) համաձայնու-  
թեամբը :

Է. ԼՈՒՇՈՒՄ

20.— Միութիւնս հինգէ պակաս ան-  
դամ ունեցած պարագային լուծուած կը  
յայտարարուի :

(Վեբչ)

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL030755

ARMENIAN  
*PROGRESSIVE SOCIETY*  
OF BALTIMORE  
1440 PAC.  
SAN FRANCISCO, CALIF.

ASBAREZ PUB. CO., 2229 VENTURA, FRESNO, CAL